չորրորդը Պետերբուրգ, ստանալով ընկերութեան գանձարանից նշանակեալ գումարը վասն ապրուստի նորին։

Վեցերորդ. Բագուայ ծխական ուսումնարանի ծախսին ընկերութիւնը օգնում է իւրաքանչիւր տարի նշանակեալ գումարը հատուցանելով, որ աղքատ Հայոց զաւակները ևս առաւել յառաջադէմ գտնուին ուսման մէջ և բաց ի սրանից Նուիրումն չքաւոր ուսանողաց ձրի դասագրքեր։

Եօթներորդ. Ընկերութեան գանձարանից իւրաքանչիւր տարի Յայտնութեան և սուրբ Յարութեան օրերում բաժանվում է Բագուայ այրեաց, տնանկ և աղքատ Հայերին սահմանեալ գումարը. նմանապէս մոռացման տակ չեն մնում և այլ ազգի կամ եկուոր աղքատներ։

Ութերորդ. Շամախւոյ նորահաստատ օրիորդաց ուսումնարանի պահպանութեան միջոցները աւելի յուսալի կերպով զօրացնելու համար նշանակուած է նմանապէս ամեն մի տարի դրամական գումար ընկերութեան գանձարանից։

Իններորդ. Համաձայն միջնորդական խնդրոյ Անդամոց խորհրդոյ արդէն ստացուել է Նորին Օծութեան Վեհափառ Կաթողիկոսի օրհնառաք լուծումը Բագուայ նորաշէն Մայր եկեղեցւոյ բակում կառուցանել շինութիւններ, որոց մէջը կարողանան տեղաւորվիլ ծխական և օրիորդաց ուսումնարանները, ապարանը, գրատունը, նմանապէս և առաջնորդարանը։ Շինութեանց հիմնարկութիւնը սկսվել է հրաշափառ Համբարձման օրը և պիտի վերջանայ մինչև Նոյեմբեր ամիսը ներկայ տարւոյս։

Այս յիշեալ բաները ընկերութիւնը չհամարելով բաւարարութիւն իւր մտադրած ազգօգուտ նպատակներին, պարտաւորվում է ընդարձակելու համաձայն կանոնադրութեան և միւս այլ քաղաքներում Հայոց մէջ իւր գործունէութիւնը, որոյ մասին ըստ չափու իւր կարեաց, շարունակում է ջանացողութիւն։ Ի հարկէ ձեզ քաջ յայտնի է որ Հայոց այժմեան դրութիւնը համեմատելով լուսաւոր ազգաց սիրալի գործոց հետ, նման է (կարող ենք ասել) մի վիրաւորեալ և կիսակենդան հիւանդի, որի բժշկութեան յոյսը և ակնկալութիւնը կախուած է մի անքակտելի միութիւնից և կամ միաբանական ընկերութիւնից. առանց այս նախանձելի երկնառաք շնորհաց, նոքա քանի մի գործունեայ որդւոց յառաջադիմութիւնները և բարոյական շինութիւնները կընթանան կաղ ի կաղ և կմնան միշտ անկատարութեան և թերութեանց մէջ։

Մարդասիրական ընկերութեան միմիայն նպատակն է մեր սիրելի ազգի ուսումնակարօտ որդւոց մէջ տարածել այն լուսաւորութիւնը և բարեգործութիւնները որից այժմ զուրկ է մեր ազգը, եթէ Աստուած կ'յաջողէ և նորա նիւթական հընարքները ժամանակին թոյլ կտան։ Խորհրդոյ անդամոց վերոյիշեալ քանի մի բարեգործութիւնները ընկերութեան խորին և բազմազարեան ակնկալութեանը նայելով մեր ազգի լրութեան գանձանակի մէջ այրի կնոջ լումային կնմանի. բայց մի այդ օրինակ ազգօգուտ շինութիւնը և մտադրութիւնը կատարելագործելու համար, ընկերութիւնը պէտք է ունենայ այլ քաղաքներում ազգասէր անձինք, որոց միջնորդութեամբ և հետևողութեամբ կարելի լինի բազմացուցանել իւր անդամոց թիւը, որով միմիայն կարող է ունենալ յարատևութիւն։

Վասն որոյ խորհրդոյ անդամք հաստատ տեղեակ լինելով ձեր քաղցր և մարդասէր բնաւորութեան կողմանէ, դիմում են առ Ձեզ և խոնարհաբար խնդրումն ի փառս և ի պատիւ Լուսաւորիչ Հօրն մերոյ աշխատութիւն յանձն առնեք հաւաքել զուցէ Աստուծոյ օգնականութեամբ և Ձեր յորդորանօք կարողանաք գտնել քանի մի պատուաւոր, անփոփոխ կամ տարեկան անդամներ, որոց կոչումն և հատուցանելի գումարի որքանութիւնը նշանակուած է ի 12-դ յօդ. կանոնադրութեան, որոյ քանի մի օրինակ սորա հետ հանդերձ վկայագրօք խորհուրդը առաքելով առ Ձեզ կրկին խնդրում է նորընտիր անդամոց անունը և պատուանունը գրել վկայագրում նշանակելով և ընծայեալ գումարը։

Խորհրդոյ անդամք մեծ վստահութեամբ յոյս ունին, որ դուք նոցա այս խնդիրը չէք թողնել անկատար։ Հաւատացէք, որ Ձեր ամենափոքր ևս հետևողութիւնը և աշխատութիւնը այսպիսի բարեգործական ասպարիզում մնալու են խորհրդոյ անդամոց սրտերում անմոռանալի, և իւրաքանչիւր տարի Ձեր պատուական անունը նոքա կպարտաւորվին հրատարակել մեր ազգային օրագիրներից և այլ առանձին տպագրութեամբ իւր ազգին հաշուատուութեան մէջ ի լուր և ի մխիթարութիւն Հայաստանի ազգասէր որդւոց, որը ի հարկէ ստանալու էք և դուք իւր ժամանակին։

Նախագահ խորհրդոյ Մովսէս Զօհրապեան

Անդամք Խաչատուր Բանանեան

Ներսէս Արամեան

Գէորգ Լալայեան

Գրիգոր Թումանեան

Իվան Պասուբով

Ատենադպիր Վարշամեան

Ի 15 Մայիսի 1871 ամի

ի Բագու

---

ՊԱՏԱՍԽԱՆԻ

## Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

*Տուր պատասխանի անձայնապէս այնըմ, որ խօսի անտեղի եւ անկշիռ, զի մի երեւեսցի յանձն իւր նորաձեւ իմն քննիչ։*

Այս օրերս վերադառնալով Մոսկուայից, տեսայ տպագրուած շաբաթաթերթ «Մեղու» մէջ, համար 25. Յուլիսի 3-ին, մի յօդուած. Պարոն «Յ. Լ. Դղըրեցի» ստորագրութեամբ, մեր հրատարակութեամբ ի լոյս ընծայած երջանկայիշատակ «Դաւիթ Բէգին Սիւնեաց Պատմութեան» վերայ, որը կարդալով մի առ մի տեսայ Պարոնի գրուածքի մէջ, քանի մի սղալ և անտեղի քննութիւնք, որոնք սրբագրան պարտք եմ համարում բացատրութեամբ ուղղել, դարձնելով այժմէն իսկ.

խօսքիս ընթացքը դէպ ի նոյն վարժապետական Պարոնը։ — Նախ Դուք յարգելի բարեկամ, գրքի մէջ եղած պատկերի զարհուրելի պատերազմը գրում էք թէ «որ ներկայացնում է Դաւիթ Բէգի յարձակումն Օսմանցւոց վերայ, Անապատի բերդից»։ Մենք զարմանում ենք Ձեր այսպիսի քննութեան վերայ, վասն զի չգիտենք թէ որ Անապատի բերդից կամենում էք ասել արդեօք. Մեղրիի, Տաթեւու, Զաւնդրու, Շէնհէրու, Կալերու, Սիսիկանու, Պաղաբերդին, Կուլբերդին, Շիւանուձորոյ, թէ Հալիձորոյ, որ ոչ մեկը յիշած չէք, այլ լոկ «Անապատի»։ պիտոյ էր Ձեզ գրել «Հալիձորոյ Անապատի բերդից»։ այս տեղ պարզ երեւում է, որ Դուք Պ. Ց Լ. ծածկուած Ղլարեցի, չէ թէ կարդացել էք իբրեւ քննիչ, ոչ, (այդ հեռու է Ձեզանից, որովհետեւ դեռ չունէք այն գաղափարի աստիճանը) այլ ինչպէս մի հասարակատես էք արել, բայց մինթէ չգիտէիք արդեօք յարգելի Պարոն որ այսպիսի լոկ հասարակութեամբ չէ կարելի հրապարակի առաջ գալ։ — Սորանից յետոյ Դուք թաք կացած բարեկամ Պ. Ց. Լ. Ղլարեցի, պատմութիւնը իբր քննելուցդ յետոյ *) ուշադրութիւն էք դարձնում և մեր յաւելուածների վերայ, այսպէս խօսելով, թէ «Գրքի վերջին թերթերում գտանում ենք հրատարակողի կող«մից յաւելուածներ, մենք յոյս ունէինք դոցա մէջ գտանել նը«կատողութիւնք հրատարակողի կողմից գրքոյկի այս կամ այն «կտորի վերայ կամ բացատրութիւնք այս և այն յօդուածի, «բայց հակառակ մեր կարծեաց չգտանք այն տեղ ոչ մինը և «ոչ միւսը, այլ քանի մի անտեղի և նիւթից ամենեւին հե«ռու յօդուածներ.» մենք բոլորովին զարմանում ենք Ձեզ վերայ ով թաքկացած Պ. Ց. Լ. Ղլարեցի նոր քննիչ, պատճառ չգիտեմ, թէ գրքոյկի մէջ ինչ կտորների վերայ նըկատողութիւն էիք սպասում մեզանից որ մենք չենք արել. կամ թէ կան մեր պատմագրութեան մէջ կտորներ որ մենք ես քննէինք. և կամ ինչ բացատրութեան յոյս ունէիք մեզանից, այս և այն յօդուածի վերայ, և թէ որն է յօդուածները, դարձեալ չգիտեմք, — որովհետեւ մեր պատմագրութեան մէջ երբէք յօդուածներ չկան որ մենք ես բացատրէինք. կամ մեր պատմագրութիւնը մի պատմութիւն է Պարոն. և ոչ զանազան։ — Երեւի, թէ Դուք նոր քննիչ, դեռ չէք հասկացել «Յօդուած» բառի ճիշտ նշանակութիւնը. վասն զի, եթէ իմանայիք, այն ժամանակը երբէք չէիք ասել թէ «այս կամ այն կտորի վերայ կամ բացատրութիւնք այս և այն յօդուածի . . . . » և շատ ի զուր էր Ձեր կարծիքը գտնելու այնտեղ «այս կամ այն», վասն զի, մենք արդէն մեր Յառաջաբանութեան մէջ յիշած եմք նախապէս, «թէ այս ինչ փոքրիկ յօդուածներն են յաւելուածքը,» ուրեմն էլ ինչ յոյս, կամ ինչ կարծիք պիտի ունենայիք. բայց ի Յառաջաբանութեան մէջ յիշածից. վերջապէս մենք աշխատել ենք այն, ինչ որ կարելի է և հնարաւոր է եղել անելու, իսկ անկարելին մենք կարող չենք Պարոն (գուցէ այդ Դուք կարողանաք), — ահա ինչպէս մեր տուած ամենահարկաւոր ծանօթութիւնը գրքի 70 երեսում, որ կարողացել ենք և տուած եմք, որպէս և գրած եմք հրապարակաւ մեր Յառաջաբանութեան մէջ ծ. երեսում այսպէս, «վերջապէս և մեր պարտականութիւնը այս գրքի մասին չենք «խնայել ինչքան կարողացել ենք կատարելու». իսկ Դուք Պարոն, այն ժամանակը միայն կարող էիք հրապարակ իջնել, ինչ ժամանակ որ կարողանայիք մեր անկատարը լրացնել, և ոչ այժմ այսպէս լոկ։ Այժմ գանք միւս տողը։ — Դուք պատուելի թաքկացեալ Ց. Լ. Ղլարեցի բարեկամ, մեր յաւելուածները համարում էք «անտեղի և նիւթից ամենեւին հեռու յօդուածներ». զարմանալի քննութիւն, հանճարեղ կրիտիկոս. մեր Յաւելուածները սիրելի վարժապետական բարեկամ, երբէք «անտեղի» չեն տպագրուած Պատմութեան թերթերի մէջ. այլ Պատմութիւնը բոլորովին աւարտուած է, Պատմութեան վերայ փարելի և անգին հեղինակից եւս, խորհրդածութիւն արած. և մէկ փառաւոր «վերջ» գրած աւարտել է պատմագրութիւնը, և ապա սկսած ենք տպագրել տալ մեր Յաւելուածները. այս տեղ որն է մեր անտեղի Յօդուածը որ Դուք յիշում էք . . . . . այս է Ձեր քննութիւնը, այս է Ձեր դատողութիւնը . . . . ի վերջոյ ինչպէս տեսնում ենք մեր ազգի առաջ մեզ հետ նաեւ բոլոր Ազգիս անաչառ ընթերցասէրք. որ Ձեր մի քանի տող գրուածքի մէջ երեւում է պարզապէս որ Դուք Հայերէն գրքեր չէք կարդացել (ներեցէք համարձակութեանս), այլ միայն կարելի է ամբողջ տարիների մէջ հազիւ հանդիպած լինի Ձեր աչքին որ և իցէ մի գիրք Հայերէն, որպէս և Դուք ինքներդ Ձեր յօդուածի սկզբում հրապարակաւ խոստովանում էք, այսպէս ասելով թէ «Ես «սովորութիւն ունիմ ազատ ժամանակներում զբօսնելով այց ելա«նել Տփխիսու գրավաճառանոցները, հարցասիրելու, արդեօք «չկար ստացուած որ և իցէ նոր գիրք Հայերէն (որովհետեւ «այդպիսի երեւոյթ սակաւ է լինում և հազիւ ամբողջ տա«րիների ընթացքում հանդիպանում է որ և իցէ գիրք Հայ«լեզուով *)։ Որովհետեւ եթէ Դուք, ով նորաձեւ քննիչ, ճշմա-

(*) Որովհետեւ ձեր արած քննութիւնները, մենք արդէն մեր Յառաջաբանութեան մէջ քննած եմք. եւ պարզ ասել որ ձեր քննութիւնները իսկ եւ իսկ մեր Յառաջաբանն է եւ ոչ քննութիւն: Չգիտեմ ինչ կնշանակէ արդեօք առանց քննութեան եւ առանց մի ընդարձակ խորհրդածութեան ասել այն որ ես արդէն ասած եմ հրապարակաւ:

(*) Դուք Պարոն, ինչպէս ինքներդ էք թոյլ եւ անհետաքրքիր Հայոց գրականութեան, խօսում էք ընդհանրապէս, բայց ոչ, այդ քննութիւնը Դուք միայն Ձեզ պիտի սեփհականացնէք եւ ոչ ընդհանրացնէք: — Ահա թողնում ենք անցեալ տարիները որ բաւականին գրքեր են դուրս եկել Ռուսաստանի մէջ (թողնենք նաեւ Տաճկաստանը որ աւելի ճարուստ է իւր նոր Հայերէն հրատարակութեամբը), միայն այս տարի առնենք, որ Պարոն, այս տարի միթէ լոկ մեր «Դաւիթ Բէգն» է դուրս եկել միմիայն, որ ասում էք թէ «Եւ այս վերջին անգամ երբ, մտնելով Կովկասեան Նահանգի Դպրոցական Գրատունը, յարուցի մի այդպիսի հարց, իմ առաջ դրեցին մի նոր Հայերէն գիրք այսպիսի մակագրութեամբ «Դաւիթ Բէգ . . . եւն», այժմ հրապարակաւ հարցնում ենք Ձեզ Պարոն, ապա ինչ եղան այս 1871 տարուայ բաւականաչափ Հայերէն հին եւ նոր մատենագրութիւնքը, որոնք

րեւ ընթերցասէր մի անձն լինէիք և հնաքրքիր Հայերէն գրեանց, այն ժամանակը Ձեր աչքին անչուշտ կհանդիպէին նոր հրատարակուած Մատեանքը, որոնց մէջ բաւականին օգտաւէտ յաւելուածներ կան։ Ահա աւելորդ չեմ համարում աւելի հաստատութեան համար աստ, Ձեր աչքի առաջ դնել նոցանից մի քանիսը, (որովհետև համաձայն Ձեր պատահասիրութեանը, կարծեմ այդքանն էս չկարողանաք գտնելու) այն է հետևեալ գեղեցիկ աշխատասիրութիւնները, և միանգամայն ուշադրութեան արժանի հրատարակութիւնքը. բայց առաջ խնդրեմ, անաչառապէս, ով Պ. Յ. Լ. Թագեալ բարեկամ

1. « Պօղոս և Վիրգինիա » գրքին մէջ « որպէս Յաւելուած փոքրիկ պատմութիւնը « Հնդկական խուղ » Թարգմանութիւն և հրատարակութիւն Գերապնիւ Պ. Ս. Նազարեանց, 1858. Մոսկուա։

2. « Հայերէն Քերականութիւն » գրքին մէջ մի յաւելուած « Ցորդորական խօսք » անունով գեղեցիկ յօդուածը, աշխատասիրութիւն և հրատար. Գաբրիէլի Մուրատեանց, 1860. Տփխիս։

3. « Ազգային կրթութիւն Լարուլէի » գրքին մէջ յաւելուածներ հրատարակողի կողմից, « Զանազան Ցօղուածներ և Ցայտարարութիւններ » հրատարակ. Գերապնիւ Մ. Միանսարեանց. 1867. ի Ս. Պ. Բ։

4. « Խնամատարութիւն երեխայոց կամքի չարագրութեան » գրքին մէջ յաւելուածներ հրատարակողից Ա. « Ցուցակ Ցատուկ Անուանց Հայոց », Բ. « Տիրքի տեսութիւնը բոյսերի », Գ. « Օրօրոցի երգեր », Դ. « Աղիւսակ պարզ տոկոսի », Ե. « Գլխաւոր Ազգաց գրամների համեմատութիւնքը », Զ. « Քանի մի գործածական գրասենեկի, կամ այլ բաների, Ռուսերենից Հայերէն Թարգմանութիւնը », Է. « Աղիւսակ համարակ Տոկոսի կամ Շահոյ » և Ը. « Ցուցակ Ռուսերէն Մատենից Պ. Բակստի հրատարակած », Հրատարակութիւն Գերապնիւ Մ. Միանսարեանց. 1868. ի Ս. Պ. Բ։

5. « Քնար Հայկական » ամենահարուստ և ամենալիակատար գրքին մէջ Ցաւելուածներ, Ա. « Մտածողութիւն Ազգային լուսաւորութեան մասին », Բ. « Դորբատեան Սերմնաբան մանկավարժութիւն. С. Петрбурсгію Вѣдомость անունով Օրագրից արտագրած. 1868. № 205. » և Գ. « Հետաքրքրական լուր Сынъ Отечества անունով Օրագրից արտագրած 1868. № 196. » Խմբագրութիւն և հրատարակութիւն Գերապնիւ Մ. Միանսարեանց, 1868. Ս. Պ. Բ.

Այժմ Դուք Պ. Յ. Լ. վարագուրեալ համազգի, բարեհաճեցէք ինքներդ տեսնելու, այս օգտաւէտ գրեանց հետ ի միասին եղած Ցաւելուածները . . . և տեսնելուդ յետոյ ինչ պիտի ասէք արդեօք այս Ցաւելուածոց դէմ մեր պատուական անաչառ ընթերցող եղբարց առջև. — կարծեմ որ այժմ անչուշտ գղջալով կլուէք, անզգուշութեամբ գոչելու մեր Ցաւելուածները « անտեղի », վերջապէս այժմ այս « անտեղին » դարձաւ Ձեր անտեղի դատողութիւնը, և պարզ ասել որ ի բերանոյ Ձերմէ դատեցաք։ Ափսոս Ձեզ Թագեալ բարեկամ, որ այս գրեանց մէջի Ցաւելուածները նախապայն չէիք տեսել, — պատճառ եթէ սոքա և սոցա նմանները յառաջագոյն տեսած լինէիք, յայնժամ երբէք, և ոչ մի բոպէ անգամ, ինքնակոչ նորաձև ծուռ և սղալ քննիչ չէիք հանդիսանալ մեր առաջ, այլ այլապէս կընթանայիք Ձեր ասպարիզում։

Այժմ դառնանք որ ասում էք « և նիւթից ամենևին հեռու յօդուածներ », ահա որպէս տեսնում են արդէն մեզ հետ և բոլոր ճշմարտասէր Մեծապատիւ ընթերցողք միաբանեայք, որ Դուք վարագուրեալ նորաձև քննիչ, երբէք ընթերցանութեան հասկացողութեամբ չէք կարդացել մեր հրատարակութիւնը (ներեցէք համարձակութեանս,) այլ ինչպէս ասացի, լոկ իբր հարևանցի էք արել, պատճառ եթէ Դուք միտաւութեամբ և հասկացողութեամբ կարդայիք, այն ժամանակը անչուշտ կհասկանայիք մեր Ցաւելուածների նիւթը, նոցա նպատակը, միտքը, և մեր հրատարակած տպագրութեան գլխաւոր առիթը. բայց ցաւում եմ որ Դուք, Պարոն, ոչ այս, ոչ այն, և ոչ միւսը, և հենց այդ է եղել առիթը որ Ձեզ վարագուրուած էք պահել. բայց մեր հոգսը չէ, մեզ համար միևնոյն է, մեր ճանապարհը առանց փշոտի է, մենք մերը գիտենք։ Ա. Ցաւելուածը, ասում էք « մի կարճ յօդուած ». բայց այստեղ Պարոն, « կարճ » բառը շատ աւելորդ էր Ձեզ յիշելը, որովհետև ես արդէն մեր Ցառաջաբանութեան մէջ յիշում եմ միատեղ յաւելուածները « փոքրիկ յաւելուածովք » *)։ Բ. Ցաւելուածը ասում էք « համապատասխան չէ մակագրութեանը, և հրատարակողը խնդրում է ներողութիւն, որ չէ կարողացած ձեռք բերելու այդ յօդուածը, ուստի խորհուրդ է տալիս կարդալ այն « Երգք Սիրով բէ վարժապետի Պատկանեան» անուանեալ գրքումը **)։ » Այստեղ ես Ձեր, « համապատասխան չէ մակագրութիւնը» ասելը շատ և շատ աւելորդաբանութիւն էր. վասն զի քանի որ նոյն ինքն հրատարակողը (մենք) երբ որ, խնդրած է հրապարակաւ ներողութիւն, ասացէք խնդրեմ, էլ ինչ հարկաւորութիւն ունէր Ձեր « համապատասխան չէ մակագրութեան » ասելը. հա, կամենում էիր որ քննիչի կամ կրիտիկոսի տիտղոս ստանայիր, ոչ այդ հեռու է Ձեր քանքարից . . . . — Ասում էք « որ չէ կարողացած ձեռք բերելու այդ յօդուածը . . . » ահա անու-

հրատարակուեցան Տփխիսու եւ Ս. Էջմիածնու Տպարաններից. ուրեմն այժմ պիտոյ է ասել Ձեզ Պ. Յ. Լ. Թաքնուած բարեկամ, որ Դուք չէ թէ հարցասէր էք եղել Հայոց գրականութեան, ոչ այլ իսկ եւ իսկ պատահասէր էք եղել:

(*) Այս գրչագիր փոքրիկ Թարգմանութիւնը, լինելով մի կտոր աղճատեալ թերթի վերայ եւ արժանայիշատակ Թարգմանչի յատուկ ձեռքով գրուած, պարտք համարեցինք, ի յիշատակ նորին ճշմարիտ Հայրենասէր հոգւոյ, տեղի տալ մեր Ցաւելուածների մէջ, նա մանաւանդ եւ մեր Ազգային պատմութեանը յոյժ կարեւոր համարելով:

(**) Այս փոքրիկ, բայց պատուական Ցօղուածը, նոյնպէս ամենահարկաւոր համարելով մեր Ազգային պատմութեան վերջին էջերի մէջ լինելը, մենք կամենում էինք մի առ մի արտագրութեամբ տպագրել մեր Ցաւելուածների մէջ, բայց մի հարցի պատճառաւ թոյլ տուեցինք նորին տպագրութիւնը. այնու ամենայնիւ, չզլացանք ցոյց տալու ճանդերձ խնդրանօք կարդալու վերոյիշեալ Պատկանեան գրքումը:

շարունակութեամբ ընթերցմունք, և փառաւոր նորահնար քննութիւնք, վասն զի մենք ոչ թէ «չենք կարողացել ձեռք բերելու այդ յօդուածը», այլ ասել ենք թէ, «բայց դժբաղդաբար մի քանի հանգամանաց պատճառաւ, չկարողացանք արտագրելով ռտպագրել այս տեղ, որի համար շատ ենք ցաւում». այս տեղ որն է «չկարողացանք ձեռք բերելու յօդուածը» որ յիշում էք. քանի որ, մենք մինչև անգամ արտագրելով մի քանի տող նոյն յօդուածից խորհուրդ ենք տուած կարդալու 33 34 35 և 36. երեսներումը յիշեալ գրքի մէջ *), Դու Պ. վարդապետեալ բարեկամ, կամ գիտութեամբ ես մեր խօսքերը այլայլած, կամ կարելի է թէ, Դու ինքդ ես այլայլուած, չգիտեմ, ինչ և իցէ, բայց պէտք է միշտ զգուշութեամբ և խոհեմութեամբ չափել ընթերցող անաչառ հասարակութեան առջև։

(Մնացեալն է յետագայս)։

---

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿՔ ԲՒՒԶԱՆԴԵԱՆ

## ԿՏԱԿ.

Աղէքսանդրիա բնակեալ Թալասցի Մեծ. Մ. Յակոբ աղայ Աշըգեան այն վեհսիրտ անձանց մին է, որք ազգին յառաջադիմութեան համար ունեցած փափաքնին գործով կարգինաւորեն, և անմահ անուն ու յիշատակ կը թողուն ազգին մէջ։

Իր անձնական հարստութենէն 2657 Օսմ. լիրա*) կտակաւ Ս. Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանին կը նուիրէ հետևեալ կտակագրով, զոր Երուսաղէմի Սիոն ամսագրի մէջ հրատարակուած տեսնելով կը փութանք մենք ալ հրատարակել։

ՅԱՆՈՒՆ ՀՕՐ ԵՒ ՈՐԴՒՈՅ

ԵՒ ՀՈԳՒՈՅՆ ՍՐԲՈՅ, ԱՄԷՆ։

Ես ստորագրեալս՝ Մահտեսի Յակոբը, Աշըգեան տոհմէն, բնիկ Կեսարիոյ Թալաս գիւղացի, և այժմ բնակիչ Աղէքսանդրիոյ, մահկանացու ըլլալս գիտնալով և առ Ազգն իմ ունեցած պարտաւորութիւնս ճանաչելով ինքնայօժար և յօժար կամօքս ու խորհրդովս կտակաւ կը թողում Սուրբ Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանի յառաջադիմութեան համար երկու հազար վեց հարիւր յիսուն եօթն Օսմ. ոսկի (2657)։

Իմ փափագս և նպատակս, երկար ժամանակէն ի վեր Ազգիս հաստատուն բարիք մը ընել՝ և ըմբռնական պարտքս կատարել ըլլալով, կտակիս արդիւնաւորութեան և յարատևութեան համար զայն հետևեալ պայմաններու վրայ կը հաստատեմ և կը հիմնեմ։

Ա.— Իմ կամքս է որ իմ կտակած գումարէն երկու հազար Օսմանեան ոսկին իբրև մայր գումար և դրամագլուխ ամենևին չպիտի պակսի, այլ միշտ օրինաւոր շահեցողութեան մէջ պէտք է մնայ. Իսկ 657 ոսկի գումարէն ի բաց հանելով Ս. Աթոռոյն տպարանին կցուած մասին նորոգութեան և ընդարձակութեան ծախքը 274 ոսկի, որ իմ հաճութեամբ և գիտութեամբ եղած է, մնացեալ 383 ոսկին և ընդ նմին բուն դրամագլխոյն ներկայ տարւոյս (ի 12էն Յուլիսի 1871 ց12 Յուլիսի 1872 ամի) շահը՝ 200 ոսկի, ընդ ամենն 583 ոսկի առ ձեռն պատրաստի գումարն արդէն իսկ ի գործ դնել և շահաբեր շինուածքներ կառուցանել յօգուտ Ժառանգաւորաց Վարժարանի Ս. Յակոբեանց։

Բ.—Իմ կամքս է, որ 200 ոսկի դրամագլխոյն բերած տարեկան 200 ոսկի շահով շարունակաբար նորանոր շէնքեր շինուին, և նորակառոյց շինուածոց բերած տարեկան եկամուտով՝ թէ հարկ եղած ժամանակ շէնքերը նորոգուին, թէ Վարժարանի ամենակարևոր պէտքերը հոգացուին, և թէ շարունակ օգտակար գրքեր տպուին Սուրբ Աթոռոյն Տպարանին մէջ, և գարձեալ նոյն գրեանց արդիւնքը միմիայն նոյն Վարժարանի պայծառութեան և յառաջադիմութեան համար գործածուի և ոչ ուրիշ որ և իցէ բանի։

Գ.—Կամիմ և կը պարտաւորեմ միանգամայն, որ Սուրբ Աթոռը ամենայն օրինաւորութեամբ և հաւատարմութեամբ գործադրելով իմ կտակս, արդիւնաւորէ և բեղմնաւորէ, որպէս զի տարուէ տարի Վարժարանին արդիւնքն աւելնայ և ապագային մէջ Վարժարանը, ըստ նախնական նպատակին և ըստ հիմնական կանոնին, կարող ըլլայ Հայաստանի գաւառներուն մէջ ալ նորանոր ճիւղեր ունենալ։

Դ.—Կը կամիմ որ իմ այս կտակիս արդիւնքովը Վարժարանին օգտին համար տպուած գրքերուն ամեն մէկուն ճակտին վրայ իմ ազգատոհմիս անունը դրոշմուի, ի յաւիտենական յիշատակ կենդանեաց և ննջեցելոց մեր Աշըգեան տոհմին։

Ե.—Իմ սոյն կտակիս օրինաւոր գործադրութեան և անխափան արդիւնաւորութեան համար Կտակակատար կը կարգեմ Սուրբ Երուսաղէմի Սրբոց Յակովբեանց Առաքելական Ս. Աթոռոյն ներկայ Եսայի Պատրիարք Սրբազան Արքեպիսկոպոսը, ապագայ իւր Յաջորդները, ներկայ Տնօրէն Ժողովը և իւր Յաջորդները, Դպրոցի ներկայ և ապագայ Տեսչութիւնը, միով բանիւ նոյն Վանքին համայն անձնուէր և հաւատարիմ միաբանական Ուխտը, որք պարտաւոր են հարկաւորապէս հսկել իմ Կտակիս անթերի գործադրութեանը ամենայն արթնութեամբ, և ամեն տարի օրի-

---

(*) Մինչեւ անգամ, որքան օրինակ կամենար, կարող էր մեզանից ծախու գնել, այլ ոչ թէ չենք կարողացել ձեռք բերելու:

(*) Հաշուելով զմի հատ Օսմ. լիրայն 7 ռուբլի, 18599 մանէթի չափ կըբռնէ։ Ծ. Խմբ.